

դաւանութեան պատկանողների համար առանձին դպրոցներ ունենալ: Եթօք ստորին կարդի դպրոցներում մեծ մասամբ այդ պահանջն ինքն ըստ ինքեան կատարուում է՝ կաթոլիկներն ու բողոքականներն առանձին առանձին դպրոցներ են յաճախում: Ենդեռը միջնակարդ և բարձրագոյն հաստատութիւնների մասին է, և որ նշանաւորն է այստեղ՝ շարժման պարագլուխները իրենց բոլոր ուշքը կենուրօնացը ել են վարժուհիներ պատրաստող կրթարանների վերայ: Կոցա ցանկութիւնն է այնպիսի հաստատութիւններ ունենալ, որ սոցանից ելած դաստիարակչուհիները ջերմեռանդ կաթոլիկ սերունդ պատրաստեն:

### ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ.

#### Գերմանիա.

**ԳԵԼԻԹ.** 30—յունուար 12 ին Բերլինի մեծագոյն դահլիճներից մէկում գերմանական կայսեր, կայսրուհու, նոցա շքախմբի պետական կանցլէրի, ուղիշ նախարարների և բարձրաստիճան ու գիտնական անձանց ներկայութեամբ պրոֆ. Ֆրիդրիխ Գելիչ, Ասորեստանի և Բարելոնի գրականութեան և պատմութեան ամենագլխուն ներկայացուցիչներից մէկը գտափառութիւն կարգաց «Բարելոն և Ս. Գիրք» (Babel und Bibel) վերնագրի ներքոյ, որ նոյն նիւթի մասին անցեալ տարի իւր կարդացածի շարունակութիւնը պէտք է լինէր և առանձին տպաւորութիւն է թողել թէ կայսեր և թէ միւս ունինդիրների վերայ: Գելիչ աշխատում է ապացուցանել, որ ո՞չ միայն Ծննդոց գրքի մի շարք պատմութիւններն ու յիշատակութիւնները, այլ և Մովսիսական օրէնքի բազմաթիւ կէտեր և գաղափարներ փոխ են առնուած Բարելոնից և գրեթէ Խորայէլի ամբողջ անցեալն իւր գրականութեամբ մի աղօտ արտացոլումն է միայն Բարելոնի ծաղկեալ քաղաքակրթութեան: Ժամանակակից հասարակութիւնը այսպիսի խնդիրների բոլորովին անձանօթ լինելով՝ կարծում է թէ նա նոր յայտնութիւններ է անում, մի ամբողջ մութ աշխարհ բաց անում մեր աչքի առաջ, և քանի որ մանաւանդ այդ համարձակ տեսութիւնները ամենաբարձր շրջանի մէջ են յայտնուած՝ ընականաբար հեռու մօտիկ շատերի մտքերը յուղել են և բաւական մեծ իրարանցում յառաջ բերել: Սակայն Գելիչի տեսութիւնների այն կէտերը, որոնք ճշմարտանման են, վաղուց յայտնի էին Հին կտակարանով և մօտոյ զբաղուսդներին, իսկ միւսները դեռ շատ ջար կիերցնեն: Զանազան կողմից անուանի

գիտնականներ շտապեցին հերքումներ գրել և ցոյց տալ նորա  
ասածների թոյլ, խախուտ, ծայրահեղ կողմները: Ի միջի այլոց  
արոֆ: Գունկէլ, որ Բարելոնեան զրոյցների և Հին կտակարանի  
առընչութեան վերաբերեալ շատ լուրջ և գիտնական աշխարհի  
կողմից արժանապէս գնահատուած ուսումնասիրութիւններ  
ունի, Chr. Welt-ի մէջ մի գեղեցիկ յօդուածով պարզում է այս  
խնդրի մի քանի կարեոր կէտերը: Իրեւ օրինակ նա վերցնում է  
ջրհեղեղը և յառաջ է բերում նորա նկարագիրը բարելոնեան  
բեեռագիր արձանագրութիւններից, որ թէ ամբողջի և թէ  
մանրամասնութեանց մէջ ակներև նմանութիւններ ունի Ա.  
Գըքի ծանօթ պատմութեան հետ: Անուբանալի է, որ երկու  
պատմուածքները կապ ունին միմեանց հետ՝ անպատճառ պէտք  
է մէկը միւսից ծագում առած լինի, և որովհետեւ բարելոնեան  
արձանագրութիւնները շատ հին են, Բարելոնը իւր աշխար-  
հագրական դիրքով շատ աւելի յարմար միջավայր է ներկա-  
յացնում ջրհեղեղների համար են, կարող ենք ենթաղըել, թէ  
հիմնական զրոյցն այդ երկըց է նորայէլացիների և ուրիշ ազ-  
գերի մէջ անցել: Սակայն դորանով խնդիրը դեռ չի վերջանայ,  
որչափ մէծ է երկու պատմուածքների արտաքին նմանութիւնը՝  
նոյնչափ և քառապատիկ աւելի ներքին՝ տարբերութիւնը. իւր  
ըովանդակած գաղափարների վսեմութեամբ, ըմբռնումների  
նրբութեամբ, պատճառաբանութիւնների բարոյական արժէքով  
Հին կտակարանի պատմութիւնն այնքան բարձր է Բարելոնեան  
զրոյցից, որ նոցա մէջ համեմատութիւն դնելն անդամ մեղք է:  
Եւ ի՞նչ է պատճառը, եթէ ո՛չ կրօնը, որ այդ պատմութիւնն-  
ներին իմաստ և բովանդակութիւն է տալիս: Բարելացիք կարող  
էին ծաղկած քաղաքակրթութիւն ունենալ, բայց նոցա կրօնա-  
կան և բարոյական հասկացողութիւններն այն աստիճան ողոր-  
մելի են, որ այդ կողմից ո՛չ միայն ամենափոքր ազգեցութիւն  
խորայէլի վերայ ենթաղըել չենք կարող, այլ և ընդհակառակն  
աւելի է պարզուում մեզ համար այն կրօնի գերընական մե-  
ծութիւնը, որ, անկախ արտաքին պայմաններից՝ անհաւասա-  
րելի բարձրութեան է հասնում մի փոքրիկ ժողովրդի մէջ և  
ամենահասարակ նիւթերն անդամ մի խորհրդաւոր գաղափարով  
ձուլում, կերպաւորում և որբացնում: Ահա այդտեղ է  
Հին կտակարանի պատմուածքների խսկական արժէքը, որ Դե-  
մքի նման քննադատներ և նկատի առնել չեն կամենում և որի  
վերայ գարձնում են ընդդիմախօսներն այս խնդրով հետաքրքր-  
ուողների ուշագրութիւնը:

—Գուցէ կլինին մեղանում դեռ այնպիսիները, որոնք կը իւն:

հրէաների և մահմեղականների մէջ քըիստոնէութիւն քարոզող պաստոր Յարէրին։ Նա ճանապարհորդել է մեր կողմէրում, բաւական ժամանակ եղել է Պարսկաստանում և յայտնի է կացուցել իրեն մանաւանդ մի անօքինակ սխրագործութեամբ, որ իւր ժամանակին բաւական աղմուկ հանեց։ — Մասիսի ստորոտում Գաշըռութուն դիւզի մօտ նա ժայռի վերայից կտրել էր տուել մի յայտնի սեպագիր արձանագրութիւն և դողունի Գերմանիա տանելով՝ վաճառել Բերլինի թանգարանին։ Այն ժամանակ գտնուեցան ուռու հրապարակախօսներ, որոնք ո. Էջմիածնի միաբանութեանն էին մեղադրում, թէ ինչու պահապան չէին կանգնեցրել ժայռի վերայ և թոյլ էին տուել դողութիւնը կատարելու։ Բանից երեսում է, որ այժմ քաջ պաստորի շահատակութիւնից իւր հայքենակիցներն ևս ապահով չեն։ գերմանական թերթերը զգուշացնում են նորա բարենպատակ ժողովարարութիւններից։

### Ամերիկա.

Դուռի նոր մարդարէն, ոչի գործունէութիւնը նկարագրուած էր նախընթաց համարի «Այլ և այլք չի բաժնում, եղակի երեւոյթ չէ Ամերիկայում»։ Այդպէս կոչուած Սցիենտիստները, որոնք դէմ են բժշկականութեան և «հաւատով» բժշկութիւն են պահանջում՝ խիստ բազմաթիւ են և Միացեալ նահանգների մէջ ընդարձակ համայնքներ են կազմում։ Նոցա «մայր եկեղեցին» գտնուում է նոստոնում, որ կառուցուած է 1894 թ.-ին և մօտ կէս միլիոն ըուրելի է նստել։ Միայն վերջին տարին 81 նոր եկեղեցիներ և ընկերութիւններ են աւելացել։ Զիկագոյում, ուր ամէնից աւելի զօրեղ է այս շարժումը՝ երկու հարիւրից աւելի «բժշկող»ներ կան։ Մեծ թուով գործակալներ տեղից տեղ են շրջում և աշխատում հետեւզներ գտնել այս շարժման համար։ Հասարակութեան, մանաւանդ եկեղեցական գասի, զայրոյթն ևս ընականաբար աւելի ու աւելի է գրգռուում այդ Սցիենտիստներից դէմ և յարձակումներ անպակաս են։ Նոցա պարագլուխներից մէկը, Տիկին Էդգար՝ սահմանական եղաւ դատի դիմել, իւր վերայ բարդուած մեղադրանքները հերքելու նպատակով, բայց աննըսպաստ հետեւանք ունեցաւ իւր համար դատը, և նա խոհեմութիւն համարեց աշխարհի չորս կողմը սփոռուած «բժշկող»ներին աղդարարել, որ տարափոխիկ հիւանդութիւնների հետ այլ ևս գործ չունենան։ Նորա խօսքն իբրև պատգամ է ըսդունուում հետեւզների կողմից։ Ֆիւադելֆիոյ դատական վարչութիւնն ևս

մերժել է մի նոր համայնք կազմակերպելու խնդիրը, առարկելով  
թէ Սցիենտիստները զուտ կրօնական խմբակցութիւն չեն, այլ  
նիւթական շահախնդրութեամբ են դրազուում և ուրեմն պէտք  
է ենթարկուին այդ նկատմամբ երկրի մէջ տիրող օրէնքներին:  
— հակապէս նոցա առեւտրական ձեռնարկութիւններն այնչափ  
յաջող և փայլուն չեն, ինչպէս արտաքուստ թուում են: Դուռըն  
վերջերս մի յայտարարութիւն է ուզգել իւր «Սիսոնի» սրդիներին,  
որից երևում է, թէ նա պէտք է դրամական մնջ տագնապել  
մէջ լինի:

— Վերջին ժամանակներս Ամերիկայում մեծ ձգտում է  
նկատուում ըոզգորական այլ և այլ հերձուածների մի ընդհանուր  
եկեղեցական միութիւն հաստատելու: Նատերը գուշակում են,  
որ ինչպէս նախորդ դարը բաժանման՝ այդպէս և ներկայ իւ-  
դարը միութեան դար պէտք է լինի: Բնական է, որ աւելի մանր  
բաժանումներն են ձգտում մեծ մարմինների հետ միանալու:  
Վերջիններն անդադար յառաջադիմում են, նիւթական ընդար-  
ձակ միջոցներ ունենալով՝ փառաւոր եկեղեցիներ են կառուցա-  
նում մեծ քաղաքներում և հասարակական կեանքի վերայ ազ-  
գեցութիւն ձեռք բերելով՝ աւելի շատ անդամներ են գրաւում:  
մինչդեռ փոքր աղանդները հազիւ կարողանում են իրենց գոյու-  
թիւնը պահպանել: Իրադ մօտենալուն մեծապէս նպաստել է վեր-  
ջերս ընդհանրացած այն սովորութիւնը, որ մի եկեղեցական բա-  
ժանմունքի գումարած ժողովներում մասնակցում են ուրիշ փոքր ր  
դադարակից բաժանմունքների ներկայացուցիչներ, և այսպէս  
կարծեքների փոխանակութիւն է տեղի ունենում, սովորում են  
միմեանց հասկանալ և ժողովներից դուքս ևս հարկաւոր գէպ-  
քերում հազորդակցութիւն պահպանել: Այժմ միացման մի նոր  
քայլ արել են «Արքանական միացեալ եկեղեցւոյ» (United British  
church) քսան և երկու աչքի ընկնող անդամներ, որոնք մի  
յայտագիր ուզգելով իրենց եպիսկոպոսներին՝ առաջարկում են  
գրական միջոցներ ձեռք առնել միութիւն գլուխ ըերելու և  
մատնացոյց են անում այն եկեղեցական բաժանմունքները, որ  
իրենց հետ միանալ կարող էին՝ մեծ օդուտներ սպասելով զու-  
համար: Նման յայտարարութիւն եղել է նաև «Կումբերլանդի  
Երիցական եկեղեցւոյ» կողմից: Թէպէտ կան նաև այնպիսիներ,  
որ այս յայտարարութիւնները մասամբ վաղաժամ, մասամբ  
անտեղի են համարում. բայց ընդհանրապէս առած նոցա հա-  
լեղուով չեն խօսում, ինչպէս կիսուին 10—20 տարի առաջ:

նրօք այդ եկեղեցական բաժանումների մէջ դաւանութեան և գաղափարի տեսակէտից այնչափ քիչ խարութիւն կայ, որ բառական կլինի վերացնել անցեալում տեղի ունեցած հակառակութիւնները, և նոքա իրենք իրենց կմիանան: Կանագայում ևս նոյնպիսի շարժում նկատուում է և արդէն սկսել է դորձնական հետեւանքներ ունենալ: Թէ այսուղ, թէ Միացեալ նահանգներում շարժման զեկալարները Մեթոդիստներն են:



### Պ Ե Յ Բ Ա Թ Ո Ռ Ո

**Նոր Տարի.**—**Մայր Աթոռի միաբանութիւնն այս անգամ** բաղդ ունեցաւ կրկին իւր հայրախնամ Դիտապետի շուրջը բոլորած ողջունելու կաղանդն ու նոր տարին: Վեհարանի գրսի ընդունելութեան դահլիճում տարուայ վերջին երեկոյեան սեղան էր սպատրաստած՝ մրգեղինով և քաղցրեղինով: Մոտ ժամը 7-ին, երբ բոլորեքեան խմբուած էին, բարեհաճեց ներս գտ նորին Վեհափառութիւնը և իւր ներկայութեամբ, իւր խիստ սիրալիք վերաբերմունքով, իւր զուարձաբանութիւններով համեմած իմաստուն և ազգուխրատներով մեծապէս նորառեց հանդիսաւոր ժամի խորհուրդն ըմբռնելու և ծշմարիտ հոգեւոր ուրախութիւն զգալու:

Վեհափառ Հայրապեալ, Միաբանութեան կենացն առաջարկելով՝ բացատրեց հանգամանօրէն, որ մարդիկ ապրում են մի գործ կատարելու, մի յիշատակ թողնելու համար: Իւրաքանչիւրն ունի կատարելու գործեր և չպէտք է սպասէ, որ ուրիշներն յիշեցնեն իւր պարտքը. այսպիսի միաբանութեան համար յատկապէս պարզ պէտք է լինի, որ համերաշխ գործունէութեամբ միայն կարելի է պարտքը հատուցանել: Նորին Վեհափառութիւնն իրը և օրինակ միաբանական սիրոյ և համերաշխութեան յիշեց, թէ տեսել է Երուսաղէմի մի լատինական վանքում պատի վերայ լատիներէն մեծ մեծ